ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԱՆԵ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-ԻՑ ՀՈՒԼԻՍԻ 10-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Նանե Շահբազյանս, աշխատելով որպես Արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական ն պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ, 2025 թվականի ապրիլի 10-ից հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ ստորև ներկայացվող նախագծերի մշակման աշխատանքներին, որի շրջանակներում մասնակցել եմ մի շարք աշխատանքային քննարկումների, դրանց շրջանառման աշխատանքներին և շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված կարծիքների ամփոփմանը.

   1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ,
   2) «Պրոբացիայի ծառայության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ,
   3) «Պրոբացիայի և քրեակատարողական ոլորտին առնչվող հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողով ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ,
   4) «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների և պրոբացիայի ծառայության կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ զեկույցների կազմման կարգը և չափորոշիչները» նախարարի հրամանի նախագիծ :

2. Կազմել եմ ներման խնդրագիր ներկայացրած դատապարտյալների անձնական գործեր:

3. Ներկայացրել եմ կարծիքներ Վարչություն ներկայացված մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ:

4. Ուսումնասիրել եմ քրեական և քրեակատարողական օրենսդրությանն առնչվող տարբեր իրավական հարցերի և հիմնախնդիրների կապակցությամբ միջազգային փորձ և

դատական պրակտիկա և ըստ այդմ ներկայացրել եմ ամփոփ տեղեկանքներ և վերլուծություններ:

5. Կազմել եմ Ազգային ժողովից, ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբից, այլ պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից, դատապարտյալներից և կալանավորված անձանցից ստացված ընթացիկ դիմումների, գրությունների, հարցումների և հաշվետվությունների վերաբերյալ պատասխանների նախագծեր:

Հարգանքով՝ Նանե Շահբազյան

10.07.2025թ.